№ 172 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 8

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 8 № 172

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Օգոստոսի 1-ից մինչև տարվայ վերջը 5 ռուբլի։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

Օգոստոսի 6-ին Մետեխի բանտում, կարճատև հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց երկրորդ Պետական Դումայի նախկին անդամ

Սեվերիան Մօխաեվիչ ԶՈՒԳԷԼԻՆ,

որի մասին խորին վշտով տեղեկացնում են ընկերներն ու ազգականները։ Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ կիրակի, օգոստոսի 9-ին, հանգուցեալի բնակարանից (2-ая Тумановская ул., № 16), առաւօտեան ժամը 9-ին, դէպի Քաշվէթի ս. Գէորգ եկեղեցին, իսկ այնտեղից, հոգեհանգստեան կարգը կատարելուց յետոյ, Կուկիայի ուղղափառների գերեզմանատունը։ (շ. կ.) 2—1

Նունէ Ներսիսեան Յովսէփեանցը որդկերանցով հանդերձ ցաւօք սրտի յայտնում է ազգականներին և բարեկամներին իր սիրելի ամուսնու

Աբրահամ Սիմէօնեան ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

վաղաժամ մահը։ Հոգեհանգիստը լինելու է շաբաթ, ամսոյս 8-ին, երեկոյեան ժամը 7-ին։ Յուղարկաւորութիւնը կիրակի, առաւօտեան ժամը 10-ին, սեփ. տնից, Ֆրէյլինսկայա փ. № 4, դէպի Զգրաշէնի եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատունը։ (շ. կ.) 2—1

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Օգոստոսի 1-ից
ՏԵՂԱՓՈԽՎԵԼ
ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ
Սերգիեվսկայա փող. (Սօլօլակ), տուն Ներսիսեան դպրոցի, № 5.

Ժողովրդական Տուն
ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ
Ժողովրդական ներկայացումների կազմակերպ.
№ 14 Հայկական սեկցիա № 14
Շաբաթ, 8 օգոստոսի
Հայոց դրամ. ընկ. Թատերասէրների խումբը Մանակցութեամբ տ. Գ ո ւ լ ա զ ա ն ի կը ներկայացնէ ժամանակակից նոր պիէս
„ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԶՈՀ"
Դրամա 3 գործ., Արաքսեանի «Նամուս» պիէսայից փոխադրութիւն Բալշիշվիլու, թարգմ. Սափրիչի։
Սկիզբն է երեկոյեան 8½ ժ.։
Տեղերի գները 50 կ. մինչև 5 կ.։
Հերթական կարգադրիչ՝ Գ. Երիցեան
(ու. շ.) (առ.) 754. 2—2

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ՕԵՕՍ)
ԷՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼԻ
Ֆաբրիկայի
Գտնվում է Կայսրութեան բոլոր մեծ քաղաքներում։
Բաժանմունքը Թիֆլիսում—Գօլովինսկի պր., 21, Արտիստ. Ընկ. շինութ.
Գները ֆաբրիկային են։
(շ. ե.) ա. 197. 25—25

ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

1

Մեր վերջին տարիների ձախորդութիւնները թուլացրել էին ժողովրդի սպառողական ոյժը և գնողական ընդունակութիւնը։

Այո, ժողովուրդը քիչ էր սպառում, քիչ էր գնում մթերքներ։

Պահանջը և կարիքը մեծ էին, բայց նա անկարող էր նրանց բաւարարութիւն տալ, որովհետև նա ենթակայ էր անբերրիութեան հարուածներին և աշխատանքի նոր ապրիւրներ էլ չունէր։

Իսկ երբ ժողովուրդը միջոցներ չունի իր կարիքները լրացնելու, այն ժամանակ նա հնար եղածին չափ կրճատում է իր գնած առարկաների քանակը։

Այդպիսով, ժողովրդի աղքատութեան շնորհիւ, վնասվում էր ոչ միայն գիւղացին, այլ և այն միւս արդիւնաբերողները և վաճառականները, որոնք պէտք է սպառման մթերքներ հայթայթեին գիւղական ազգաբնակութեանը։

Բոլորովին փոխվում է տեսարանը, երբ գիւղական ժողովուրդը ստանում է նիւթական միջոցներ իր կարիքները առատօրէն հոգալու համար։ Աջող բերքից յետոյ գիւղացին ամբարում է պաշարներ իր համար և սկսում է այնուհետև հոգալ իր միւս պահանջների մասին։ Եւ երբ նա սկսում է գնել զանազան իրեր իր համար կամ ձեռք բերել իր տան համար կահ-կարասիքներ, այն ժամանակ նա կեանք է տալիս և այն արհեստաւորին ու արդիւնաբերողին, որոնք ունեն նրա պահանջած մթերքները։ Եւ ահա հարատացած ժողովրդի շրջանում մենք տեսնում ենք եռանդուն գործի և պարապմունքի մէջ խանութպանին, կօշկակարին, դերձակին, գործիքներ պատրաստողին, քարտաշին, որմնադիրին և այլն։ Իսկ այս արհեստաւորների զբաղմունքի զարգանալը իր կողմից ոյժ է տալիս աւելի ևս մեծ վաճառականների և գործարանների մասնակցութեան մթերքներ հայթայթելու պահանջներ յայտնող ազգաբնակութեան։

Հարստացած և ապահովված մասսաները նպաստում են ամէն տեսակ արդիւնաբերողների զարգացմանը, և շատ սխալվում են նրանք, որոնք հոգ չեն տանում մասսաների ապահովութեան վրա, կարծելով որ առանց սպառողների այդ մեծ շուկայի՝ նրանք կարող են ընդարձակ կերպով առաջ տանել տեխնիկական արդիւնագործութիւնները և առևտուրը։

Մասսաների հարստութիւնը ամենամեծ գրաւականն է խոշոր արդիւնագործութեան և առևտրի զարգացման համար։

Եւ այդ հիմնական կէտի վրա պէտք է կենտրոնանան մեր հոգսերը, եւ մենք ծրագրում ենք մեր երկրի արդիւնագործական լայն զարգացումը։

Ա. Քալանթար

ԿՐԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլիս, 6 օգոստոսի

Յունաստանի պատասխանը սպասվում է վաղը։

Հովանաւորող պետութիւնների պատերազմական նաւերից նաւաստիների ափ իջնելը և յունական դրօշակը իջեցնելը գեղեցիկ տպաւորութիւն թողին կառավարական շրջաններում։ (Հ. Գ.)

—

Աթէնք, 6 օգոստոսի

Երէկ մինիստր-նախագահ Բալլին թիւրքաց դեսպանին յանձնեց յունաց կառավարութեան պատասխանը Բ. Դրան վերջին նոտային։ Զորս հովանաւորող պետութիւնների ներկայացուցիչներին նոտայի մասին յայտնեց արտաքին գործերի մինիստրը։ (Հ. Գ.)

—

Բ ե ր լ ի ն.—Մամուլը ուլտիմատում է համարում թիւրքական վերջին յայտագիրը և կարծում է, որ Յունաստանը չի տայ պահանջվող ստորացուցիչ պատասխանը, իսկ դրանից խուսափելը պատերազմի ցանկալի առիթը կը լինի Թիւրքիայի համար։ Վիէննայից և Պարիզից հեռագրում են, որ հովանաւորող պետութիւնները այժմ կը դիմադրեն թիւրքական զօրքերի ափ իջնելուն Կրետէի վրա։

—

Կ. Պոլիս, 31 յուլիսի

Ճիշդ տեղեկութիւնների համեմատ, թագաժառանգ Եուսուֆ-Իզէդդին բացարձակ յայտնում է իր դժգոհութիւնը երիտասարդ-թիւրքերի կոմիտէի ընթացքի դէմ, որովհետև երիտասարդ-թիւրքերը, նրա կարծիքով, ոչ միայն իրապէս իրանց ձեռին են առ ոչինչ են դարձրել սուլթանի իրաւունքները։ Նա օրինակ է բերում այն, որ սահմանադրութեան նոր նախագծով պարլամենտի նախագահը սուլթանից չէ հաստատվում։ («Рѣчь»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վիէննա, 6 օգոստոսի

Երէկ Ֆրանց-Յովսէփ կայսրի ծննդեան օրվայ առիթով ամբողջ միապետութեան մէջ մատուցվեցին հանդիսաւոր պատարագներ։ Մարիէնբատում աստուածպաշտութեանը ներկայ էր Էդուարդ թագաւորը շքախմբով։ Երեկոյեան թագաւորը պաշտօնական ճաշ տուեց։ Հանդիսաւոր պատարագ տեղի ունեցաւ նաև համարեա եւրոպական բոլոր մայրաքաղաքներում, ինչպէս նաև Բալկանեան թերակղզում։ (Հ. Գ.)

—

Բերլին, 6 օգոստոսի

Շենեբերգում գնացքի անցնելու ըստ էին «Իմպէրիալ» գաղային ընկերութեան հրապարակի վրա երկաթէ աշտարակը փլվեց։ Գնացքի վրա ընկած աշտարակի փլատակներից վնասվեցին մի քանի վագոններ. շատ ճանապարհորդներ աւելի կամ պակաս վնասուածքներ ստացան։ (Հ. Գ.)

—

Լոնդոնի և Պարիզի օսմանեան դեսպանները հաղորդել են Ռիֆաաթ փաշային, որ, պատերազմ յայտարարվելու դէպքում, մեծ պետութիւնները թիւրքական ջրերում նաւային ցոյցեր կը կատարեն։

Գեորգի թագաւորը հեռագիր է ստացել Պետերբուրգից, հաւատացնող՝ թէ մեծ պետութիւնները բոլոր միջոցներով կը խափանեն պատերազմը Թիւրքիայի և Յունաստանի միջև։

—

Խօլմօգորի (Արխանգ. գ.), 28 յուլ.

Աքսորից ազատվեցին այն բոլոր կովկասցիները, որոնք ուղարկված էին մինչև զինուորական դրութեան վերցնելը, սակայն նրանց իրաւունք չէ տրվում վերադառնալ Կովկաս՝ երկու տարվայ ժամանակով։ Ինչպէս Արխանգելսկի, այնպէս և Վոլոգդայի, Վեատկայի, Աստրախանի և Սիբիրի նահանգներում կան բազմաթիւ կովկասցիներ՝ հայ, վրացի, ռուս, թուրք, օս, չեչէն... շատերն ընտանիքով. որոշ ժամանակով՝ երկու երեք տարով աքսորվածների թիւը տասնեակների է հասնում, իսկ մինչև զինուորական դրութեան վերցնելն ուղարկվածները հարիւրներով են հաշվում։ Աքսորական

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թէհրան, 6 օգոստոսի

Կառավարութիւնը պատուիրագրեց ազատել պրինց Զիլլի-Սուլթանին և թոյլ տալ նրան հեռանալ Պարսկաստանից։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգից «Р. В.» լրագրին հաղորդում են հետեւեալը. «Լուրերին նայելով, որոշված է ռուսական զօրքերը դուրս բերել Պարսկաստանից օգոստոսի 15-ին»։

—

Մոսկվայի վրայով Պետերբուրգ գնալիս Լեախովի հետ տեսակցել են Մոսկվայի լրագիրների թղթակիցները։ Լեախով յայտնել է նրանց, որ ինքն ամենևին դէմ չէր նոր կարգերին Պարսկաստանում և որ նա կատարում էր միայն շահի հրամանը։ Վերջին օրերի մասին նա նկատեց, որ ամենատաք օրերն էին յունիսի 20, 27, 28, 30 և յուլիսի 2-ն ու 3—4-ը։ Յունիսի 30-ին սահմանադրականները պատեցին առաջադէպ զօրքի գիծը, մտան Թէհրան և գրաւեցին մէջլիսը։ Այն ժամանակ գնդապետ Լեախով փակվեց զօրանոցներում և պաշտպանվում էր մինչև ցերեկվայ 3 ժամը յուլիսի 3-ին, երբ ծանուցում ստացաւ, որ շահը բաստ է նստել։

Ճանապարհ ընկնելուց առաջ Լեախով տեսնվեց շահի հետ ռուսական միսսիայում։ Շահը շնորհակալութիւն յայտնեց Լեախովին և ասաց, որ նա կը վարձատրվի։ Ով կը վարձատրէ նրան, Լեախով չը գիտէ։ Նրա կինն ևս, որ ներկայ էր խօսակցութեան ժամանակ, նկատեց. «Երևի, Ալլահը»։

Լեախովի կարծիքով, նոր կազմը Պարսկաստանում խախուտ է։ Մի շարք նահանգմունքները շարունակվում են։ Սահմանադրականների զօրապետներից Լեախովը տաղնդաւոր է համարում միայն Սիպեհդարին։

Այդպէս անուանված «ընկեր Եփրեմի» հետ երբէք չէ հանդիպել և նրա մասին խօսում էր չը թաղնված զայրոյթով։ Նրանից միայն երկու յայտարարութիւն է ստացել Լեախով։ («Рѣчь»)

ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ՇՂԴԻԱՑՈՒՄ

Գերմանական յայտնի լրագիրների թղթակիցները կարական կերպով հերքում են այն լուրերը, որ իբր թէ գործադուլը դադարել է երկրի առանձին մասերում։ Այդ տեղեկութիւնները տարածում են փոքր ծաւալով լոյս տեսնող շվեդական բուրժուական լրագիրները, բայց ստուգելուց յետոյ յայտնվում է, որ հնարովի են այդ լուրերը։ Բանուորները առաջվան պէս կատարեալ համերաշխութիւն են ցոյց տալիս։ Աւելի շուտ, որպէս կարծում է «Ֆրանկֆիւրտեր Ցայտունգ» լրագրի թղթակիցը, կարելի է երկիւղ կրել այն բանից, որ կուսով յափշտակված բանուորները, հակառակ իրանց պարագլուխների խորհուրդների, սխալ քայլեր կանեն, կը դադարեցնեն աշխատանքը այնպիսի ձեռնարկութիւններում, ուր այդ անպայման ցանկալի չէ, առհասարակ կը սկսեն չը հնազանդվել մինչև այժմ իրանց ղեկավարող կոմիտէին։ Վերջինս մի կոչ հրատարակեց, աղերսելով շարունակել կատարել իրանց պարտաւորութիւնները։ «Միայն տխմարները, որոնք չեն մտածում թէ որպիսի վտանգաւոր հետևանքներով է սպառնում (հրդեհներ, տարափոխիկ հիւանդութիւններ և այլն) ջուր չը մատակարարելը, կարող են խորհուրդ տալ կուսի այդ միջոցին դիմելու»—ասում է կոմիտէը։ Գործադուլի պարագլուխները ստիպված են լինում յորդորել բանուորներին համբերել և հանդիստ մնալ, տեսնելով այն զայրոյթը, որ պատճառում են նրանց տրամվայների, աւտոմոբիլ-կառքերի, շոգենաւերի, փուռերի գործունէութիւնը վերսկսելու փորձերը։ Այդ բոլոր փորձերը, պէտք է ասած, շատ համեստ ծաւալով են լինում։ Երկաթուղական ծառայողները ռէֆէրանդում սարքեցին ամբողջ երկրի մէջ, որի ելքից է կախված, թէ կը միանան նրանք գործադուլին թէ՞ ոչ։ Բեռների բացակայութեան և ճանապարհորդների երթևեկութեան խիստ պակասելու պատճառով, գնացքների թիւը՝ առանց գործադուլի ևս՝ մինիմումի է հասցված։

Մալմէից «Բերլ. Տագ.» լրագրին հաղորդում են, որ գործադուլ անողները այնտեղ սեփական փուռ են բաց արել, որը ամեն օր 6000 պուդ հաց է թխում։ Բանուորները այնտեղ անվարձ են աշխատում։ Այնտեղի բանուորական պարագլուխը յայտնեց, որ գործադուլ անողները մի քանի շաբաթ կը դիմանան, եթէ մինչև անգամ ստիպված լինեն սոված մնալ։ Մալմէում տրամվայն և կառքերը գործում են, բայց նաւահանգստում կատարեալ մեռելութիւն է տիրում։ Շատ շոգենաւեր հեռացան՝ բեռներ չը գրտնելու պատճառով։ Նաւահանգստային բանուորները անգործ են կանգնած կամ ձուկ են որսում այն միջոցին, երբ գրասենեակի ծառայողները կամ մինչև անգամ իրանք տէրերը նաւաստիների հետ միասին աշխատում են կատարել ամենաանհրաժեշտ աշխատանքը։ Կարգը քաղաքում օրինակելի է։ Երեկոյեան ժողովրդական այգում ածում է երաժշտութիւնը, և ժողովուրդը պարում է, կարծես ոչինչ չէ պատահել։ Մեծ տպաւորութիւն գործեց Լունդի համալսարանի պրոֆեսոր ազատամիտ Վիկսելի ճառը, որը խօսեց Մալմէում բանուորների միտինգում։ Պրոֆեսորը մատնացոյց արեց բանուորներին ներկայ կուսի ահագին նշանակութեան վրա, որը նրանցից պահանջում է հաստատակամութիւն և զոհեր տալու պատրաստակամութիւն։ Միևնոյն ժամանակ նա զգուշացնում էր բանուորներին բռնի միջոցներից և յորդորում էր հետևել այժմեան հանդիստ և զսպված տակտիկային։

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պոլիս, 29 յուլիս

Կառավարութիւնը վերջապէս հաճեցաւ ուսական իշխանութեանց, բացարձակապէս հերքել, թէ հայ ժողովուրդը կայսրութեան մասին իր անձնուէր ու հաւատարիմ ուղղութենէն շեղած չէ բնաւ։ Ադանայի դէպքերու ծագմանը մէջ բնաւ մեղապարտ չէ։ Ատոնց ազէտաւոր ծագումը եղած է կարգ մը եւրոպացիներու մէջ, որ թիւրք խուժանը սխալ ըմբռնած է։

Յայտարարութիւնը, իր ամբողջութիւնովը, բարեացակամ է. միայն թէ ինչ պէտք կար ուշացած ըլլալու այսքան, ինչու օր առաջ երևան չելլէր՝ խափանարար ըլլալու կարգ մը շփոթութեանց, անարդար դատավարութեանց, բանտարկութեանց, ձերբակալութեանց և դատապարտութեանց, որոնք յաւիտենապէս արատաւորեցին օսմ. արդարադատութիւնը։

Հերքումը, իր յայտարարութեան ձևին մէջ, տեսական հանգամանք մը պիտի ունենայ, եթէ, այսօրուընէ անդին, Կիլիկիոյ մէջ շարունակեն ձերբակալութիւններ, ծեծ, յիմարական դատավարութիւն,—ինչ որ տեղի ունեցաւ մինչև ցարդ։

Նպաստի միջազգային յանձնախումբը նկատի առնելով եւրոպական օժանդակութեան ոչ թէ անբաւականութիւնը, այլ ոչնչութիւնը, յայտարարած է, թէ ատոր պատճառը կը գտնէ կիլիկեան աղէտներուն մէջ ցարդ պաշտօնապէս հայերուն յանցաւոր ճանչցուիլը։ Ատկէ կը հետևցնենք, որ թերևս, պաշտօնական հերքումէն ետքը, նպաստներու նոր դուռներ կը բացուին՝ հասնելու գոնէ անհրաժեշտ պահանջներու միայն։

Պետութիւնը, պարլամենտի մէջ քուէարկուած նպաստները բաշխելու համար, կազմած է յանձնախումբ մը և կայսերական հաւանութեան ենթարկած։

Առայժմ քիչ մը, համեմատաբար, երևոյթները աւելի լաւ են, մեր ընկերական յարաբերութիւնները թիւրք շրջաններու հետ՝ վերսկսուած աւելի բարեկամօրէն։ «Թանին» խմբագրապետ Հիւսէյն Զահիդ կուզէ աւելի հաշտ երթալ մեր մամուլի հետ, իր քաղաքական դաւանանքին մէջ չի կրկներ ալ. «Ամեն ինչ տիրող տարրի համար»։

Ու կը մնայ, իր անդրջրհեղեղան համոզումներուն մէջ, պարլամենտի նախագահը, Ահմէդ Ռիզա, թէ հայերը անջատողական են, որովհետև Պարիզի կոնգրէսի մէջ ըսուած է, թէ տեղական ինքնօրէնութիւն (autonomie) կուզենք։ Չեմ գիտեր թէ որքան ստոյգ է նախագահի առարկութիւնը. միայն սա յայտնի է, որ երբ սահմանադրութիւնը եկաւ նստելու հին վարչական քանդուածքներու վրայ, պարզուեցան հայ քաղաքական կուսակցութեանց ծրագիրները, որով ալ հարկ չմնաց ենթադ-

բական գիծերու վրայ առաջնորդուած՝ ըսել, թէ հայերը ունին թագուն ծրագիրներ, ինքնօրինական քաղաքականութեան ձգտումներ։ Կերևի թէ ապակեղրոնացումը կը շփոթուի ինքնօրինութեան դէմ, և, տակաւին այսօր ալ, Դախագահական աթոռի վրայ նստած մեղկօրէն, կընէ այնպիսի վերագրութիւն, որ իր մտքին մէջ գոյութիւն ունի։

Այդ անհատական կարծիքը եթէ մեծ լոկ անհատական համոզում մը, անձնահաճ մտածութիւն մը, երբէք ուշադրութեան չպիտի առնէինք։ Բայց արի տես որ, իբրև պարլամենտի նախագահ, այդպէս նախապաշարուած, իբրեն հետ ունի պարլամենտի մեծամասնութիւնը, բէյեր, հօջաներ, փաթթոցաւորներ, որոնք կապուած են իր բերնին և քուէին կուտան կուրաբար այս կամ այն հարցը վճռելու։ «Արևելքը» ծանրապէս կամբաստանէ նախագահը իր այդ համոզումներուն համար, որ տեղ-տեղ և դուցէ բարձրագոյն շրջանակներու մէջ ալ յայտնելէ չի զգուշանար։

Օգոստոսի վերջին օրը պիտի գումարուի ազգ. երեսփոխանական ժողովը՝ զբաղելու Երուսաղէմի հաշուական հարցովը։ Հաւանական կը գտնեմ, որ նիստը փոթորկալից ըլլայ, որովհետև գաղտնի միջոցներով ձեռք անցուած Ղեոնդի մէկ նամակը, որ հրատարակուեցաւ, ինչպէս գրեցի նախորդ թղթակցութիւնով, պատճառ պիտի տայ նոր հարցաքննդումներու, յարձակումներու և պաշտպանողականներու։ Ղեոնդեան պաշտպան երեսփոխանները, որոնք մի առ մի թուարկուած են իր համբաւաւոր նամակին մէջ հանրութեան առջև, բաւական վարկաբեկ եղան։ Հարկաւորաբար ատոնք պիտի ուզեն նոր դիրք մը ստեղծել, եթէ հնարաւոր ըլլայ։

Աւետիս Սուրէնեան, «Ծիածանի» խմբագիրը, որ, Ղեոնդի նամակին յայտնի խոստովանութիւնովը, այդ կուսակցութեան պաշտպանն է փաստաբանօրէն, երուսաղէմեան վարդապետի մը հետ ընկերացած, դիմած է արդարադատութեան մինիստրի՝ օրինական սխալներ ժառանգիշ ընելու այն որոշումին մէջ, որով ազգ. ժողովը հեռացուց Ցարութիւն պատրիարքը պաշտօնէ և տեղապահ մը նշանակեց։ Բարեբաղդաբար, արդարադատութեան գործերու մինիստրը, աւելի յարգող մեր սահմանադրական իրաւունքներու, յայտարարած է, թէ օրինական գտած է ազգին առաջարկութիւնը և պիտի հրամայէ մաղթական*) գործադրութիւնը։

Երկու անտեղութիւն կը տեսնենք մենք այդ դիմումին մէջ. 1) ինչպէս հայ անհատ մը դիմում կընէ պաշտօնատարի մը՝ անհետևանք ձգելու ազգ. ժողովի որոշում մը. 2) ինչպէս կը համարձակի վարդապետ մը, կուսակցութեան մը անունով, պաշտօնատուներ դեգերիլ։ Այս իրողութիւնը, որ գրուած է «Ծիածանի» մէջ, մեզի կը յիշեցնէ այն հին դժբաղդ տեսարանները, ուր այս կամ այն անհատը, աշխարհական կամ հոգևորական, կը կրթնէր պաշտօնատարի մը և կը գործէր ի վնաս ազգին։

Սուրէնեան, Աշրգեան պատրիարքի օրով, ոստիկանութեան մինիստրի հետ ունեցած յարաբերութեանցը կամ դիմումներու համար, կասկածելի նկատուեցաւ ժամանակին վարչութեան և ծանր ամբաստանութիւնովը արտաքսուեցաւ երեսփոխանութենէ։ Արդի երեսփոխանութիւնը, Սուրէնեանի գրաւոր դիմումին վրայ, որով բողոքած էր իրաւունքներուն մասին, վերահաստատեց զինքը իր ազգային իրաւունքներու մէջ։

Բայց այսօր, դժբաղդաբար, ինքը իրաւունք կուտայ կարծելու, թէ Աշրգեանի վարչութիւնն ու երեսփոխանութիւնը ունեցած ըլլալու են արդարացի նկատումներ իր մասին ծանր եզրակացութեան հանելու։ Կը կարծեմ, որ ազգ. ժողովը պիտի ստիպուի ետառնել իր որոշումը Սուրէնեանի մասին։

Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԶԵՄՍՏՎՕՆ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ

—

Пускай намъ говоритъ измѣнчивая моды,
Что тема старая „страданія народа“,
. . . . . .
Не вѣрьте, юноши! не старѣетъ она!
Н. А. Некрасовъ.

Լսելով խօսակցութիւններ և կարդալով յօդուածներ, խորհրդակցութիւնների արձանագրութիւններ մեզ մօտ զեմստվո մոցնելու անհրաժեշտութեան մասին, զեմստվոյի գուցէ մօտիկ ապագայում մուտքը Անդրկովկաս *), ես շատ չեմ ուրախանում. ինձ պաշարում է մի մտածողութիւն, մի տարակուսանք։

Ցենզաւոր զեմստվոն—անշուշտ այդպիսին է լինելու հոկտեմբերեան Դումայի շնորհածը, ինչպէս կարելի է դատել նրա մշակած ինքնավարական ծրագրից—ցենզաւոր զեմստվոն, ասում եմ, շատ բան չը պիտի անէ, ինչպէս քիչ բան է արել քաղաքային ինքնավարութիւնը, եթէ գործին ջերմագին չը մասնակցեն տեղական ինտելիգենտ ոյժերը, որոնք ձայնից զուրկ լինելով հանդերձ՝ կարող կը լինեն կրել զանազան պաշտօններ։

Ինչու՞ Ռուսաստանում քաղաքային ինքնավարութիւնը չունի այն հմայքը, ինչ ունի 1864-ի, անգամ 1890 թուերի կանոնադրութիւնների հիման վրա գործող զեմստվոն։ Զէ՞ որ երկու ինքնավարութիւններն էլ ձևված են մի տարաղով։

Պատասխանը պարզ է այն ժամանակի համար, որոնք ծանօթ են ռուս հասարակական մտքի պատմութեան հետ։ Զեմստվոյի կեանքում տեղի ունեցաւ մի մեծ հասարակական հոսանք, որ յայտնի է «ժողովրդի մօտ գնալ» անունով (хожденіе въ народъ)։ Ռուս ինտելիգենցիան եկաւ այն համոզմունքի, և արդարացի՛ ի հարկէ, որ իր մեծաւոր, բարոյական զարգացողութեամբ, նիւթական կացութեամբ պարտական է մուժիկի կոշտ ձեռքերին։ Պէտք է տալ նրան այդ պարտքը, «գնալ ժողովրդի մօտ» և [illegible] զանազան ասպարէզներում նրա անմիջական շահերին։ Այդ հոսանքը շուտով երկուսի բաժանվեց. մի մասը ստիպված իւրացրեց յեղափոխական գործելակերպ և, վաղահաս լինելով, շուտով ընկճվեց (նարոդնիկներ, զեմլէվոլցիներ, նարոդովոլցիներ և նրանց հետևորդները), միւսը մնաց, որքան ժամանակ կարելի էր, ժողովրդի ծոցում, լեգալ աշխատանքի մէջ, սննդեց զեմստվոյի գործունէութիւնը, բեղմնաւորեց նրան, տալով զեմստվոյին այսօրվայ հմայքը, փառքը...

Ո՞րն է զեմստվոյի փառքը, նրա պակը. զեմստվային վիճակագրութիւնը, զեմստվոյի վարած ժողովրդական լուսաւորութեան գործողութեանը և յեռոյ ասում.

— Ախպէր, նեղութիւն մի քաշի. սարեր, ձորեր, թուփեր՝ բոլորն ադուէս են դարձել աչքիս առջև։

Ինչու՞ է այդպէս. ինչու՞ մեր ստացած վէրքերը չենք կարողանում ժոռանալ, մեր անաջողութիւնները՝ չը յիշել. ինչու՞ չենք կարողանում մեր յիշողութիւնից ջնջել այն ամենը, ինչ որ մեզ պէտք չէ, ՝ի՞ւսակար է, և դրա տեղը լցնել աւելի շահեկան յիշողութիւններով...

Բայց դարձեալ փորձենք։ Եթէ ճանապարհորդութիւնը անցեալը մոռացնել չը կարողանայ, գոնէ կարող է նոր տեսարաններով մեզ մի առ ժամանակ զբաղեցնել։

Ուրեմն ճանապարհվենք։

Ի հարկէ այս ճանապարհորդութիւնը հին ժամանակների ճանապարհորդութեան հմայքը չունի. մարդ չէ կարողանում ուղածին պէս օգտվել դրսի օդից, իր հետ նոյն կուպէի մէջ եղողներին որպէս ընկեր չէ ճանաչում, ճաշի կամ ընթրիքի ժամանակ բոլորը նոյն սփռոցի շուրջը չեն բազմում և որպէս իսկական ընկերներ իրանց ունեցած ճանապարհի պաշարը ընդհանուրի տրամադրութեան տակ չեն դնում։

Սակայն երկաթուղին այն առաւելութիւնն ունի, որ կարաւաններից աւելի արագ է շարժվում, և մարդ անձրևից ու ցրտից վախենալու պէտք չունի։ Զէ՞ որ մենք հիմա ոչ ցրտին ենք դիմանում և ոչ շոգին։

Մինչև Պետերբուրգ ես լուութեամբ կանցնեմ և այդ քաղաքից էլ միայն շատ քիչ բան կը պատմեմ։

Մայրաքաղաքում ես իջայ իմ մի բարեկամի մօտ և քիչ յետոյ գնացի ինձ ծանօթ մի ընտանիքի այցելութեան։ Ընտանիքի «գլուխը» բժիշկ էր և պատրաստվում էր բժշկապետութեան քննութիւն բռնելու։ Եւ այժմ Ադդամի և Կարեագինի բաղարներում ցորենը կազած է 80 կօպէկի վրա, բայց սեպտեմբերից զգալի կերպով կիջնի, որովհետև պահանջ չէ լինելու. գարին 40—50 կօպէկի վրա է, բայց կիջնի մինչև 25—30 կօպէկ պուդը։

Ղարաբաղի բոլոր կողմերում գոհ են հունձից, թէև տեղ տեղ սօվա հիւանդութիւնը և կարկուտը վնասել է արտերին։ Հացից խպառ զուրկ են Կարկաճան գիւղացիները. կարկուտը ոչնչացրեց սրանց բոլոր արտերը. վնասը հասնում է 6000 ր.։ Թէթև կերպով վնասված են և Դօլանլար գիւղացիները։ Այս երկու գիւղացիները գնացին հարևան գիւղերը և հնձավարձ բերին, մասամբ պատրաստեցին տարեկան հացի մի մասը։

Այս տարի մրգեղէն չը կայ. խաղողը պակաս է, տանձ ու խնձոր չը կայ ի բաց առնելով մի քանի գիւղեր, որոնք գտնվել են ձորակներում և ցրտահար քամիների չեն ենթարկվել։

Քաղաքում հացի գներն իջած են. պրօզը 4 կ. ֆունտը, լաւաշը 4 և կէս կ., բայց յոյս կայ, որ այս գներն էլ աշունքից իջնեն։

Վատ սովորութիւնները ժողովրդից չեն դուրս գալիս. գողութիւնները սովորական են։ Դարձեալ գիւղում կրակեցին մի մարդու 300 խուրձը, Ուլուբաբից փախցրին մի աղջիկ, Պարեցիք գիւղից էլ մի ուրիշ աղջիկ։ Արբունհեղութիւնների և բարդութիւնների առաջն առնելու համար գործակալը իսկոյն կարգադրեց խաղաղութիւն ձգել երկու կողմերի մէջ և հանդիսաւոր պսակ կատարել։ Ժողովուրդը շատ տգէտ է. այսպիսի բաները նա համարում է քաջագործութիւն։

**

—

Գանձակ, 6 օգոստոսի

Հայ այգեպէտերը, մի քանի խորհրդակցական ժողովներ գումարելուց յետոյ, վերջապէս որոշեցին Կորինապատին ջուր տալու հարցը։ Նախքան ջուր բաց թողնելը Կորինապատ՝ Զօլակ գետակով ոռոգվող այգիների տէրերը, որից ջուր են ստանալու կորինապատցիք, պայմանաւորվեցին ստանալով կորինապատցիներից 150 ր. «Դաւալուղայ» տեղը ամբարտակ շինելու համար, որ ոչ մի կապ չունի Կորինապատի հետ, և 500 ր. ստորագրութիւն՝ Զօլակ գետակի վրա ամբարտակ կառուցանելու համար։

Պէտք է նկատել, որ մի քանի վերջօրէ ջուրն այնքան արժան չը նստեց Կորինապատի 300 տան վրա, որոնք օրվայ աշխատանքով ապրելով հազիւ են կարողանում իրանց ընտանիքին չոր հաց հասցնել։

Սարգօ

—

Խաթունարխ (Էջմիածնի գ.), 3 օգոստ.

Մեր գիւղի առուակի ջուրը ենթարկվում է վարակման և դառնում անպէտք՝ գործածութեան համար։ Դեռ անցեալ տարի մեր շրջանի գործակալ քահանան, ի նկատի առնելով այդ հանգամանքը, կարգադրեց գիւղիս եկեղեցու երէցփոխին՝ ձեռնարկել եկեղեցու բակում մի ջրհոր փորելու, որպէսզի թէ տեղիս ժողովուրդը և թէ բազմաթիւ ուխտաւորները, որոնք յաճախակի այցելում են մեր գիւղի եկեղեցին, հնարաւորութիւն ունենան գործածել ջրհորի ջուրը։ Թոյլատրվեց ծախսել այդ ջրհորի համար մի որոշ գումար եկեղեցու արդիւնքից։ Գործակալի այդ քայլը ժամանակին ուրախացրեց մեր գիւղացիներին։ Սակայն շատ շուտով վրա հասաւ հիասթափութիւն։ Երէցփոխը անմիջապէս մի քանի գիւղացոց հետ սկսեց հոր քանդել, բայց հազիւ մի քանի ժամ աշխատել էին ջրհորի վրա, երբ վրա հասաւ ծխատէր քահանան և խանգարեց հոր փորելը՝ անտեղի կերպով վիրաւորելով աշխատողներին։ Դիւղի քահանան այդ խնդրում ունէր աշակիցներ, որոնք անձնական հաշիւներ ունեն երէցփոխի հետ։

Եւ այսպէս՝ մեր ծխատէր քահանան հակառակվելով՝ ջրհորի գործը գլուխ չեկաւ ու մինչև օրս մեր գիւղացիներն ստիպված են առուի վարակված ջուրը գործածել, և ամեն տարի, այդ ջրի պատճառով, վտարամ դերեզման են իջնում շատ կեանքեր։ Աշնան եղանակին մարդիկ Խաթունարխում այնպէս են կոտորվում, որ կարելի է կարծել, թէ համաճարակ է տիրում։ Ի՞նչ ասենք այն անձանց, որոնք, տեսնելով այս բոլորը, հակառակ են գտնվել ջրհոր փորելուն։ Ա. Մ.

—

Սամարղանդ, 20 յուլիսի

Ամսիս 18-ին ծխ. ժողով էր նշանակված քննելու 1) տեղիս հայոց ծխ. դպրոցի գոյութեան խնդիրը և 2) ժամանակաւոր քահանայ հրաւիրելու հարցը։

Հոգաբարձութեան բացատրութիւնից յայտնվեց, որ առաջիկայ ուսումն. տարվայ համար հարկաւոր է առնուազն 2700 ր., որի դիմաց թոշակադրամից յոյս կայ գանձելու 8—900 ր., թատրոնից, երեկոյթներից, ժողովրդ. զբօսանքներից և այլ պատահական աղբիւրներից մօտ 800 ր., ուստի պէտք է որոնել աղբիւրներ 1000—1100 ր. պակասը ծածկելու համար։ Ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ դպրոցը չը փակելու համար, ինչպէս յայտարարված էր հոգաբարձական հրաւէրի մէջ, անհրաժեշտ է դիմել նուիրատուութեան սիստեմին, և, հոգաբարձութեան գործը թեթևացնելու համար, ժողովրդին բաժանեցին դասակարգերի, ըստ պարապմունքի, և իւրաքանչիւր դասակարգից ընտրեցին 2 հոգի՝ պարաք դնելով նրանց վրա առանձին թերթիկներով դիմումներ անել, յիշեալ գումարը լրացնելու։

Ժամանակաւոր քահանայ հրաւիրելու հարցը թեր և դէմ վիճաբանութիւնների առարկայ եղաւ։ Այնուամենայնիւ այս հարցն ևս լուծվեց դրական մտքով, և ժողովը յանձնարարեց հոգաբարձութեանը՝ հրաւիրել մի ժամանակաւոր քահանայ, պայմանով որ միջնակարգ կրթութիւն ունենայ, կուսակցական չը լինի և տարիքն էլ 40-ից ցած չը լինի։

Պէտք է ասել, որ քահանայի կաքիքն այստեղ զգալի է ոչ միայն կրօնական արարողութիւնների համար, այլ և շատ դէպքերում։ Զէզոք

—

Աբասթուման, 3 օգոստ.

Ամբողջը էր դիրքով, իր մեղմ կլիմայով, իր սօսի անտառով, ոչ միայն Կովկասի, այլ և ամբողջ Ռուսաստանի մէջ ամենաառաջնակարգ ամարանոցներից մէկն է համարվում։ Ռուսաստանի զանազան անկիւններից ամարանոցաւորներ են գալիս այստեղ։ Թոքերի առողջութիւնը կորցրած մարդկանց համար Աբասթումանը մի հրանալի բուժարան է։ Այդ պատճառով շատերը նոյնիսկ ձմերում են այստեղ։ Բայց, Աբասթումանը դեռ ևս շատ բաներում յետ է մնացել և այդ՝ շնորհիւ երկաթուղու բացակայութեան։ Ճիշդ է, Բօրժօմից մինչև Աբասթուման 75 վերստ երկարութեան լաւ խճուղի կայ, բայց հէնց այդ 75 վերստի պատճառով շատերը հրաժարվում են Աբասթուման գալ։ Եւ իրաւ, այդ 75 վերստը բացի այլ անյարմարութիւններից՝ ճանապարհորդները առաջուց եկել էին, վաճառված տոմսակները անցագրերի հետ համեմատել ու գնացել։

Ֆինլանդական շոգենաւային ընկերութեան նաւերը մանր են, սակայն վերին աստիճանի գեղեցիկ, մաքուր և յարմար։ Ամառ ու ձմեռ այդ նաւերը շարունակ գնում ու գալիս են Պետերբուրգի և Ստոկհոլմի միջև, ամառը ուղղակի Պետերբուրգից, իսկ ձմեռը Ֆինլանդական Հանգէօ քաղաքից։

Ինձ կաւատայի ընկեր եղաւ մի ռուս եբիտասարդ գնդապետ, որի գլխաւոր գործը, ինչպէս հետևում էր իր պատմութիւններից, ճանապարհորդութիւնն ու Ֆլիրտն էր։ Եւ ինչու՞ չը ճանապարհորդէ, քանի որ միջոցներ կան և բարեկամ բժիշկներից միշտ կարող է տկարութեան վկայական և հետևապէս նաև արձակուրդ ու նիւթական օգնութիւն ստանալ արտասահմանում իբր թէ բժշկվելու համար։

Այս անգամ նա մտադիր էր այցելել Շվէդիան և Նորվեգիան մինչև Նորդ-Կապ։ Նա ճանապարհորդում էր որպէս մասնաւոր անձ, առանց պաշտօնագրեստի։

Նա մի առանձին հաճոյքով պատմում էր զանազան «ջրերում» իր ունեցած արկածների և կանանց շրջանում իր տարած յաղթութիւնների մասին։ Այդ մարդը բացի իր անասնական բնազդներին յագուրդ տալուց ուրիշ աւելի բարձր նպատակների և հաճոյքների մասին գաղափար անգամ կարծես չունէր։ Բարեբաղդաբար մեր ընկերակցութիւնը երկար չը պիտի տևէր, միայն երկու օր։

Պետերբուրգից ճանապարհվելուց 16 ժամ յետոյ մեր նաւը հասաւ Ֆինլանդիայի մայրաքաղաքը՝ Հելսինգֆօրս։

Գեղեցիկ մայիսեան առաւօտ էր։ Ընկերս ու ես ցամաք իջանք և գնացինք քաղաքի մէջ պտտելու։

ՄԱՀՎԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Ուրբաթ, 2 օգոստոսի

Շուշու շրջանի հացաբոյսերն այս տարի առատ են։ Դաշտավայր տեղերի կալակասը վերջանալու վրա է, լեռնային տեղերինը նոր է սկսվում։ Կորեկները այրվեցին, ոռոմզեան յունիս ամսից սկսած մինչև վերջին օրերս խպառ անձրև չեկաւ և այնպիսի երաշտ սկսվեց և շոգեր արաւ, որ մեր շրջանը չէր տեսել։ Վերջին օրերս ամենայն անձրև եկաւ, բայց անօգուտ, միայն հովացրեց այրված հանդերն ու անդաստանը և անտառները։

Էժանութիւնը կամաց-կամաց սկսվում է. դաշտավայրի թուրքերը դեռ կալակաս չեն սկսել, լեռներից իջնելուց՝ կը կալսեն. այն ժամանակ շուկաների հացաբոյսերի գները կիջնեն։ Առհասարակ հայերը մեծ քանակութիւնով վաճառելու ցորեն չեն արտահանում. սրանք ամբարում են և յարմար ժամանակին, երբ գինը բաւական բարձրանում է, բանում են իրանց շտեմարանների դռները։ Իսկ թուրքերը, որովհետև պահելու յարմարութիւն չունեն, կալը կալսելուց իսկոյն եղածը տանում են շուկաները։ Առ որովհետև ես գիտեմ, որ նա հայերէն լրագիր չէ կարդում, այդ պատճառով կարող եմ մի քիչ աւելի համարձակ կերպով գրել նրա մասին։

Պետերբուրգում եղած ժամանակս վերոյիշեալ բժիշկը խիստ զբաղված էր գիտական փորձեր կատարելով։ Նա վերցրել էր մի ապակեայ անօթ, մէջը ջուր էր ածել, մանր քարեր ու բոյսեր էր դրել և ժամակայ ճահճից գորտի ձուեր հաւաքելով թուխս էր դրել։ Մանրիկ գորտերն արդէն սկսել էին ուրախ-ուրախ լողալ և մեր բժշկին անվերջ հաճոյք պատճառել իրանց շարժումներով ու զարգացմամբ։ Պարոնը դեռ ևս բոլորովին չէ վերջացրել իր կնոջ օժիտը, և այդ պատճառով կարող է այդպիսի գիտական ուսումնասիրութիւններով պարապել էլի մի առ ժամանակ։

Եւ որովհետև ինքն ու կինը համաձայնվել են զաւակներ չունենալու, որ չը լինի թէ այդ չարաճճիներն իրանց ազատութիւնը խանգարեն և աւելորդ հոգսերի պատճառ դառնան, ուստի բժիշկը իր երիտասարդ սրտի ամբողջ սէրը նուիրել էր գորտիկներին։

Եւ ինչու՞ զարմանալ։ Մի՞թէ չէք տեսել տիկիններ և օրիորդներ, որոնք երբէք չէին համաձայնվի մի մանուկ վերցնել իրանց գիրկը կամ փայփայել. փո՛ւյ, սի՞թէ դա կարելի բան է. իսկ միևնոյն ժամանակ գրկում փայփայում, համբուրում, ժամերով գրկած քաղաքի ամենալաւ փողոցներով ման են ածում—ինչ—շնիկնե՞ր։

Երբ մարդ արհամարհում է բնականը, ստիպված է լինում անբնականին դիմել։ Բնութեան օրէնքները ոչնչացնել չէ կարելի. կարելի է միայն ծռել, անբնական ուղղութիւն տալ։

Եւ դեռ կան մարդիկ, որոնք պնդում են, թէ մարդը ինքնիշխան մի արարած է, անկախ կամքի տէր և կարող է իշխել իր զգացումների վրա...

Փորձառութիւնն այլ կերպ է խօսում։

Բ.

Մայիսի 20—25-ն էր, որ ես Մեծն Պետրոսի անկուն կամքի զօրութեամբ կառուցված մայրաքաղաքումն էի։ Կովկասում արդէն դէն դէն էին դրել ոչ միայն ձմեռվայ հաստ զգեստները, այլ և գարնանային սովորական հագուստները. իսկ այստեղ գարունը նոր էր սկսվում և մի գիշեր նոյնիսկ ձիւն եկաւ։ Ցուրտն այն աստիճան զգալի էր, որ բարեկամս, որի մօտ իջել էի, կամեցաւ հարաւից եկած իր հիւրին պատուել վառարանը վառելով։ Սակայն տանը փայտ գտնել չը կարողացաւ, որովհետև ձմեռվայ պաշարն արդէն վերջացել էր, իսկ նորը չէին գնել, որովհետև կարծել էին, որ ամառը գալիս է։ Ի՞նչ անէինք։

Մի քիչ մտածելուց յետոյ նա վառարանի մօտ բերեց անպէտք թղթերի կողովը, և որովհետև այդտեղ բաւական թուղթ կար, դրանց բոցով կարողացանք բաւական տաքանալ. և ես նոր հասկացայ, որ խմբագիրները—և մանաւանդ հայ թերթերի խմբագիրները—փայտի փող տալու հարկաւորութիւն չունեն։

Պետերբուրգում ամենաառաջին պահանջը անցագիրն էր և ամենավերջինն էլ անցագիրը եղաւ։ Երբ գնացինք շոգենաւի տոմսակ վերցնելու, մեզ ասացին, որ լաւ կը լինի, եթէ անցագիրս թողնեմ իրանց մօտ, որպէսզի յետոյ դրա պատճառով ոչ մի դժուարութիւն չը ծագէ։ Եւ ես թողեցի։ Ճանապարհվելու ժամին, երբ իմ իրեղէնները վերցրած նաւ էի մտնում, շոգենաւային ընկերութեան գործակալը անցագիրս յանձնեց ինձ։

Ժանդարմներ և ոստիկանութեան կամ մաքսատան պաշտօնեաներ չը տեսանք։ Նրանք առաջուց եկել էին, վաճառված տոմսակները անցագրերի հետ համեմատել ու գնացել։

Ֆինլանդական շոգենաւային ընկերութեան նաւերը մանր են, սակայն վերին աստիճանի գեղեցիկ, մաքուր և յարմար։ Ամառ ու ձմեռ այդ նաւերը շարունակ գնում ու գալիս են Պետերբուրգի և Ստոկհոլմի միջև, ամառը ուղղակի Պետերբուրգից, իսկ ձմեռը Ֆինլանդական Հանգէօ քաղաքից։

Ինձ կաւատայի ընկեր եղաւ մի ռուս եբիտասարդ գնդապետ, որի գլխաւոր գործը, ինչպէս հետևում էր իր պատմութիւններից, ճանապարհորդութիւնն ու Ֆլիրտն էր։ Եւ ինչու՞ չը ճանապարհորդէ, քանի որ միջոցներ կան և բարեկամ բժիշկներից միշտ կարող է տկարութեան վկայական և հետևապէս նաև արձակուրդ ու նիւթական օգնութիւն ստանալ արտասահմանում իբր թէ բժշկվելու համար։

Այս անգամ նա մտադիր էր այցելել Շվէդիան և Նորվեգիան մինչև Նորդ-Կապ։ Նա ճանապարհորդում էր որպէս մասնաւոր անձ, առանց պաշտօնագրեստի։

Նա մի առանձին հաճոյքով պատմում էր զանազան «ջրերում» իր ունեցած արկածների և կանանց շրջանում իր տարած յաղթութիւնների մասին։ Այդ մարդը բացի իր անասնական բնազդներին յագուրդ տալուց ուրիշ աւելի բարձր նպատակների և հաճոյքների մասին գաղափար անգամ կարծես չունէր։ Բարեբաղդաբար մեր ընկերակցութիւնը երկար չը պիտի տևէր, միայն երկու օր։

Պետերբուրգից ճանապարհվելուց 16 ժամ յետոյ մեր նաւը հասաւ Ֆինլանդիայի մայրաքաղաքը՝ Հելսինգֆօրս։

Գեղեցիկ մայիսեան առաւօտ էր։ Ընկերս ու ես ցամաք իջանք և գնացինք քաղաքի մէջ պտտելու։

պարհորդների համար ունի և այն դժբաղդութիւնը, որ գտնվում է Ախալցխայի կառապանների ձեռքում, որոնք, ինչպէս ասում են, ուղղակի անասնատած կերպով քերթում են ճանապարհորդներին։

Պատմում են, որ տարիներ առաջ մի ռուս տիկին Պետերբուրգից Բօրժօմ հասնելով՝ ուզում է գալ Աբասթուման։ Կառապանները պահանջում են 40 ր. այդ 75 վերստի համար, մինչդեռ երևի Պետերբուրգից մինչև Բօրժօմ՝ մօտ 4000 վերստի համար՝ տուած կը լինէր ոչ աւելի։ Եթէ Բօրժօմից մինչև Աբասթուման հաշի չէ երկաթուղի անցկացնել, ցանկալի էր գոնէ մինչև Ախալցխա անցկացնել, որը խոստանում է մի օր լաւ վաճառաշահ քաղաք դառնալ, բայց այժմ, շնորհիւ երկաթուղու բացակայութեան, կուլտուրապէս շատ յետ է մնացել։ Իսկ Ախալցխայից մինչև Աբասթուման, որ 25 վերստ է, ծայրայեղ դէպքում կարելի էր կառքով անցնել։

Տեղիս ամարանոցաւորներին մեծ ուրախութիւն պատճառեց այն լուրը, որ տրվեց թերթերում, թէ պէտք է օգոստոսից աւտոմոբիլներ գնան-դան Բօրժօմ. իսկ երբ տեսան 2 աւտոմոբիլներ, որոնք Բօրժօմից ճանապարհորդներ բերին և շուտով էլ յետ դարձան, նրանց ուրախութիւնը չափից անցաւ։ Երկաթուղի չը լինելուց յետոյ գոնէ կանոնաւոր աւտոմոբիլային հաղորդակցութիւն լինէր մինչև Բօրժօմ։

Տեղիս հայերն ունեն մի գեղեցիկ քարաշէն եկեղեցի, որը կառուցված է 1898 թ. բագուեցի Աղաման եղբայրների ծախսով և նուիրված է Ն. Կ. Բ. Գէորգի Աւէտարանդրօվիչի յիշատակին և նրա անունով էլ կոչվում է ս. Գէորգ Զօրավարի եկեղեցի։ Սակայն եկեղեցին դաչաներից շատ հեռու է գտնվում։ Մուրադ Ասպետ

ԶՐԱԲԱՇԽԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

(Արարատեան երկիր)

III *)

Ահա մեր երկրի արդիւնաբերութեան այդ մեծ ու դրական պահանջը՝ Արարատեան դաշտավայրի ոռոգման մեծ խնդիրը՝ լուծելու հանգէս է գալիս Բագուի Հայոց Կուլտուրական Միութեան Ջրաբաշխական սեկցիան, որի կանոնադրութեան մէջ կարևոր տեղ բռնող այդ ծրագիրը կարծեմ առաջարկված է Պետերբուրգ ի հաստատութիւն, և որը, որքան գիտենք, սպասվում է ստացվել մինչև սեպտեմբեր։

Զրաբաշխական խնդիր շօշափող այդ սեկցիան անշուշտ հիմնված կը լինի Արարատեան երկրում այդ հսկայական գործը շահագործելու սկզբունքների վրա, և որը իրագործումն կը ստանայ ոչ այլ կերպ, եթէ ոչ մի առանձին մեծ ակցիօներական ընկերութիւն կազմելով։

Կուլտուրական միութեան այդ սեկցիան, արդէն սկսել է իր նախաձեռնութիւնները առ այժմ ջրաբաշխական գործը ուսումնասիրելու տեսակէտից, յանձնարարելով այն մասնագէտ ինժեներներին, որոնք, շրջագայելով երկիրը, պիտի քննեն, մշակեն այն ծրագիրը, թէ ինչ տեղերից կարելի է ջուր հանել և ինչ միջոցներով կարելի է իրագործել աջող ոռոգման գործը։

Աժրողջ նահանգը բաժանված է ջրաբաշխական 11 շրջանների, որոնցից մինն է և առաջին տեղը բռնում է Վաղարշապատի գաւառը իր 3 շրջաններով, որի ոռոգման ակունքներն են հանդիսանում ներկայումս Քասախ, Դալուչայ և Հաժփերթ գետակները։

Այդ առիթով մենք մօտենալով ինժեներ Սրամ Մալխասեանին, որը նոյն յանձնարարութիւնը ստանձնող ինժեներներից մինն է, մօտից ծանօթացանք նրա մշակած ծրագրի հետ, որը նկարել էր արդէն ամբողջ մակարդակը իր բոլոր գիտելիքներով։

Ըստ Ա. Մալխասեանի ծրագրի, ոռոգման գործը Արարատեան դաշտավայրում կարելի է վերածել երեք արհեստական ճիւղերի՝ 1) քաղաքային աշխատութիւն, 2) ջրամբարային միջոցներ և 3) էլեքտրօտեխնիկական միջոցներ—ջրաւոր մեքենաներ՝ ջուրը դէպի վեր հանող մօտորներով։

Քաղաքային աշխատութիւնները վերաբերում են Թալիշի, Մաստարայի, Թալինի, Քեօրփալուի և Ղզըլլարի շրջանների համար, ուր ստորերկրեայ՝ տունելային աշխատութիւնը ընդունակ է տալու առատ ջրի աղբիւր։

Ջրամբարային աշխատութիւնները թէև խոշոր գումարների գործ են, սակայն այդ ծրագիրը հսկայական միջոցներ է պահանջում, որը միանգամայն ապահովում է ոռոգումը այն լայնարձակ լեռնահովիտների, սկսած Աշտարակի դռներից, Արայեան դաշտից մինչև Սարդարապատի շրջանները։

Այդ ջրամբարները լինելու են Քասախի անդնդախոր ձորում, որը կտրելով երկու տեղից, այն է՝ մէկը Կարբի գիւղի տակից, իսկ միւսը Ապարանի շրջանում. դրանք գարնան հեղեղումներից կը դառնան ահագին արհեստական լճեր և միանգամայն կապահովեն ստորև ընկած դաշտերի աշխատութիւնները։ Միւս ջրամբարային ժասը կազմելու է Համփերթ գետակը, որը դարձեալ իր անդնդախոր ձորով հսկայական լիճ կը կազմի գարնան հեղեղումներից։

Էլեքտրօտեխնիքական ջրմուղային աշխատութիւնը վերաբերում է Սև ջրի շրջանին, որը ըստ Ա. Մալխասեանի հսկայական մի աշխատութիւն։

Ա. Մալխասեանը պատրաստել է ամբողջ գործի մակարդակը։

Քանաքեռ աւանի դիմաց, Հրազդանի վրա գտնվող էլեքտրօտեխնիկական կայարան՝ տալիս է 1500-ից մինչև 1800 ձիու ոյժ։ Էլեկտրական ոյժը հեռատար թելերով տանելով Սև ջրի ափը՝ 500—800 ձիու ոյժը բաւական կը լինի դէպի վեր մղելու այնքան ջուր, որ կը ջրի Զէյվա հայ և թուրք գիւղերի, Ալիբէյլուի, Այլանլուի, Քեօլանլու և Ղարանլըղ գիւղերի ջրարբի և անջրդի բոլոր հողերը, իսկ մնացեալ 1000 ձիու ոյժը կը տայ Երևանին էլեքտրական լաւ լուսաւորութիւն, Քանաքեռ աւանին՝ ձորի Ծաղաւ-Աղբիւրը, և թէկուզ ձիաքարշը դարձնելու էլեքտրական տրամվայ։

Այս կէտի մասին ինժ. Կիրակոսեանն էլ առաջարկում է իր ծրագիրը, այսինքն իր ներկայումս ունեցած էլեքտրական մօտորի ոյժը, որը 250 ձիու ոյժից չէ անցնում, դարձեալ տանելով Սև ջրի ափը՝ դնում է այն էջմիածնի դիմաց և ջուր տալիս միայն ի հարկէ էջմիածնի հողերին։

Զրաբաշխական այս ծրագիրը իրագործելու ձեռնամուխ է լինում Բագուի Հ. Կ. Միութեան Ջրաբաշխական սեկցիան, որին կառաջարկվի ևս Ջրաբաշխական մի գործ, Ա. Մալխասեանի ձեռքով. դա Կարբի գիւղի շինելիք ջրանցքն է, որ Քասախի ձորից հանվելու է մի աղբիւր մինչև Կարբի գիւղը։ Գիւղացիք, միջոց չունենալով իրանք հանելու այդ ջուրը, պատրաստվում են դիմել Բ. Հ. Կ. Միութեանը, որը երևի շատ հեկան պայմաններով չի զլանայ իրագործելու այդ կարևոր գործը։

Սպասենք և տեսնենք։

Մուշեղ Բագրատունի

*) Տես «Մշակ» № № 163, 164, 165, 166, 168, 169 և 170.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՆԵՐԲԻՆ ՇԻՐԱԿԻՑ *)

ԺԷ) Համզաքեարակ.—159 տուն։ Դպրոց երբէք չեն ունեցել։ Ունեն մի նորընծայ բաւական շնորհալի քահանայ. գուցէ սա կարողանայ ուսման սէր արծարծել ժողովրդի մէջ և մի դպրոց բաց անել։ Խեղճ քահանային չը գիտեմ գիւղից փախցնելու համար թէ պատուելու, գիւղական լօթիները գիշերը մտել սրբել-տարել են ամեն ինչ, մօտ 300 ր. ապրանք։ Ունեն մի գեղեցիկ եկեղեցի, որի վարագոյրի վրա ի թիւս այլ կրօնական պատկերների աչքի էր ընկնում մի սարսափելի պատկեր՝ Դաբրիել հրեշտակապետը մեղաւորների ձեռք ու ոտքը պինդ կապտած սրի առաջ խառնած քշում է դէպի դժոխք։ Այս սարսափելի պատկերը համզաքեարակցիք տեսնում են և դարձեալ գնում տէրտէրի տունը կտրում։ Ես կարծում եմ, որ շուտով այդ վարագոյրն անգամ կը գողանան։ Շատ էլ իրաւունք չունենք մեղադրելու. մարդիկ անօթի են. կարիքն անմեղ մարդուն էլ երբեմն աւազակ կը դարձնէ։

ԺԸ) Բայրաղտար.—Այս գիւղը աւերակների տպաւորութիւն թողեց մեզ վրա։ Մի ժամանակաւոր գաղթական քահանայ ունէն, որի երեսը չը տեսանք. 70 տուն ժողովուրդ է, դպրոց բոլորովին չէ ունեցել։ Զը գիտեմ սովնած թէ փչացած մարդիկ մայիս ամսում կողոպտել էին տեղական եկեղեցին։ Ժողովրդի մեռած դրութիւնը տեսնելով ուղղակի վէր եկանք եկեղեցու դռանը և հարկաւոր մարդկանց տեսնելուց և հարցուփորձ անելուց յետոյ հեռացանք։

ԺԹ) Կարմիր Վանք.—34 տուն։ Ահա մի փոքրիկ, բայց շատ գեղեցիկ, գողտրիկ վանք կարմիր սրբատաշ քարով կառուցված։ Սա հնումն կոչվում էր Դպրէ-Վանք և շինված է 7-դ դարում։ Անտէրութեան շնորհիւ այս վանքն էլ միւս հնութիւնների նման աւերակ էր դառել։ Բայց կարսեցի Սաղաթէլ քահանայ Տէր-Դաւթեանն իր սեփական ծախքով, իր յատուկ հսկողութեամբ և ժողովրդի մասնաւոր օգնութեամբ վերանորոգեց կաթուղիկէն ամբողջապէս և նրա զանազան քայքայված մասերը։ Այժմ այնպիսի շէն դրութեան է, որ կարծես նոր է շինված։ Անչափ շնորհակալութեան արժանի է տէր-Սաղաթէլ հայրը. երանի թէ ուրիշները օրինակ առնէին սրանից։ Դպրոց չունեն, քահանայ չունեն։ Կարմիր Վանքը, Մավրակը, Թազաքենդը, Դուլուճուղը այնքան մօտիկ են իրար, որ հաւաքական ոյժով կարող են մի լաւ դպրոց և մի լաւ քահանայ պահել։ Բայց այս բոպէիս ոչ մի տեղ դպրոց չը կայ։ Սրանք յոյսները դրել են ուրիշի օգնութեան վրա։ Աւելի պարզ ասենք՝ ժածունը ըրդեն, դպլը մէջը դնեն, որ սրանք ուտեն։ Այստեղ էլ պատմեցին, որ փչացած հարևանները կողոպտել են Մավրակի եկեղեցին և տէրտէրի տունը։

Մնացած գիւղերի մասին իմ ասելիքները թողնում եմ ուրիշ յարմար ժամանակի։

Ս. Տէր-Մելքիսէդեկեան

*) Տես «Մշակ» № № 163, 164, 165, 166, 168, 169 և 170.

— Այստեղ բոլորովին տարբեր մթնոլորտ է երևում,—բացագանչեց հիացած գնդապետը։

Եւ ինչ համեմատութիւն կարող էր լինել Ֆինլանդիայի և Ռուսաստանի մէջ։ Ես յիշում եմ, երբ 22 տարի առաջ առաջին անգամ նաւով գնում էի Պետերբուրգից Հելսինգֆօրս մի ընկերոջ հետ. մեզ հետ նաւի վրա եղող մի ռուս, որը իր տանտիրոջ կահկարասիքը տանում էր Ֆինլանդիա ամարանոց, զանազան պատճառներ էր գտնում ասիացիներիս վրա ծիծաղելու. կամ մեր եափունչին էր նրա ծիծաղը շարժում, կամ գլխարկի վրա էր նկատողութիւն անում և կամ մի այլ այդպիսի պատճառ էր գտնում։

Իսկ երբ հասանք Հելսինգֆօրս, հերթը մեզ եկաւ իր վրա ծիծաղելու։ Մաքսատան պաշտօնեաները պահանջեցին, որ սա իր հետ եղած արկղները բանայ. սա ռուսերէն պատմում էր, որ դրանք տան իրեղէններ են, ամարանոց է տանում, արգելված բան չունի, և՝ վերջապէս՝ չէ՞ որ ինքը ռուսական կայսրութեան սահմաններումն է գտնվում, ինչու պիտի նայեն։ Սակայն Ֆինլանդիայում ռուսերէն չը գիտեն, իսկ այն ժամանակ բոլորովին չը գիտէին. և այդ պատճառով ոչ ռուսն էր շվեդերէն հասկանում և ոչ Ֆինլանդացին ռուսերէն, և խեղճ ռուսը շփոթված ձեռներն ու ոտներն էր շարժում։

Ֆինլանդիան ռուսաց կայսրութեան ամենաղարգացած մասն է։ Այդ փոքրիկ աւտօնօմ երկիրը եւրոպական երկիրների հետ համահաւասար քայլերով է ընթանում։ Ուսումը պարտադիր է և ժողովրդական կամ ծխական դպրոցները ձրի։ Այդ դպրոցները կապված են եկեղեցու հետ և դրանց ծախքերը որպէս հարկ դրված է ամբողջ ժողովրդի վրա։

Բացի միջնակարգ և այլ բարձր դպրոցներից, Ֆինլանդիան, որ ընդամենն $2^1/_2$ միլիոն բնակիչ է հաշուում, ունի նաև իր համալսարանը։ Այդ համեմատութեամբ Անդրերկրովկասը երկու համալսարան պիտի ունենար։

Վերջին տարիներս որոշ ուղղութեան մարդիկ սկսել են հասկանալ, որ Ֆինլանդիան—Ռուսաստանի գերիշխանութեան տակ գտնվող այդ փոքրիկ երկիրը—մայր երկրից աւելի բարձր է կանգնած ուսման և կուլտուրայի կողմից։ Եւ նրանք սկսել են աշխատել, որ այդ երկու երկիրների զարգացման աստիճանների մէջ եղած անհաւասարութիւնը հարթեն, բժշկեն։ Այդ պարոնները գործում են յամառ տոկունութեամբ ոչ թէ մայր երկիրը բարձրացնելու և Ֆինլանդիայի բարձրութեանը հասցնելու համար, այլ Ֆինլանդիան ցած գլորելու և մայր երկրի վիճակին հասցնելու համար։ Բայց արդեօք աջողութիւն կունենան։

Ընկերս ու ես քաղաքի մի քանի փողոցներից անցնելով հասանք մի պարկ, գեղեցիկ ծառուղիներով, հիանալի նստարաններով, մի պարկ, որի մի կողմը մի փոքրիկ տախտակեայ խանութի մէջ նստած օրիորդը գուլպայ էր գործում և կամեցողներին հանքային ջրեր վաճառում։

Ես թողի գնդապետին նստած, իսկ ինքս գնացի մի հին ծանօթի տեսութեան։ Իսկ երբ վերադարձայ նաւ, նա չը գիտէր, թէ ինչպէս արտայայտեր Ֆինլանդիայի մայրաքաղաքից իր ստացած տպաւորութիւնները։ Նա գործ էր ածում ամենագեղեցիկ բառեր, հաւասարեցնում էր այդ երկիրը Շվեյցարիային։ Նա տեսել էր ոչ միայն Հելսինգֆօրսի հոյակապ շինութիւնները, հիանալի պարկերը, մաքրութիւնը և կարգ ու կանոնը, այլ իր սովորութեան պէս նաև գեղեցիկ սեռին պատկանող անցուդարձողներին։

Միւս օրը. վաղ առաւօտից մենք մտանք շվէդական շիսերը։ Ամբողջ 4—5 ժամ մենք գնում էինք կղզիների միջով, որոնք ծածկված էին գարնանային կանաչ և գոյնզգոյն ղեստով։ Ամենուրեք երևում էին գեղեցիկ վիլլաներ՝ հատ-հատ կամ խմբովին։ Կղզիների մէջ երթևեկում էին մանրիկ շոգենաւեր ու հասարակ նաւակներ։ Տեսնում ես ծառերով բոլորովին ծածկված մի փոքրիկ կղզի. ծառերի միջից երևում են ըստ մեծի մասին կարմիր ներկված մի քանի տնակներ. շատ տեղեր ծածանվում է գեղեցիկ շվէդական դրօշակը՝—մեծ դեղին խաչ կապոյտ ֆօնի վրա։ Եւ այդ տեսարանները շարունակ փոփոխվում էին։ Կարծես մեր տեսածը ոչ թէ իրականութիւն էր, այլ մտացածին պատկերներ։

Գնդապետս, որ նախընթաց օրը հիացել էր Ֆինլանդիայով, այդ օրը մնացել էր բառի բուն նշանակութեամբ բերանը բաց և բառ չէր գտնում իր զարմանքը, հիացումը յայտնելու համար։

— Ախր սա ինչպէս է,—ասում էր նա,—որ ես երկար տարիներ գիմնազիայում աշխարհագրութեան ուսուցիչ եմ եղել, սակայն ոչ մի դասագրքի մէջ չեմ կարդացել, որ Սոմկհօլմը շիսէր ունի և այն էլ այսքան գեղեցիկ։ Ինչով են զբաղված մեր դասագրքի հեղինակողները. մի՞թէ կարելի է այսքան մեծ և այսքան սքանչելի մի շիսէր մոռացութեան տալ։

Եւ երբ տեսարանները փոխվում էին և նոր պանօրամներ էին բացվում մեր առաջ, ընկերս նորից ամ էր քաշում, նորից ցոյց տալիս ինձ, թէ որքան ներդաշնակ կնոջով միմեանց են խառնվում ծառերի կանաչ և տների զանազան գոյները, թէ ինչ հրաշալի բուսականութիւն կայ այդտեղ, թէ գեղեցիկ սեռին պատկանող անցուդարձողներին։

Միւս օրը. վաղ առաւօտից մենք մտանք շվէդական շիսերը։ Ամբողջ 4—5 ժամ մենք գնում էինք կղզիների միջով, որոնք ծածկված էին գարնանային կանաչ և գոյնզգոյն ղեստով։ Ամենուրեք երևում էին գեղեցիկ վիլլաներ՝ հատ-հատ կամ խմբովին։ Կղզիների մէջ երթևեկում էին մանրիկ շոգենաւեր ու հասարակ նաւակներ։ Տեսնում ես ծառերով բոլորովին ծածկված մի փոքրիկ կղզի. ծառերի միջից երևում են ըստ մեծի մասին կարմիր ներկված մի քանի տնակներ. շատ տեղեր ծածանվում է գեղեցիկ շվէդական դրօշակը՝—մեծ դեղին խաչ կապոյտ ֆօնի վրա։ Եւ այդ տեսարանները շարունակ փոփոխվում էին։ Կարծես մեր տեսածը ոչ թէ իրականութիւն էր, այլ մտացածին պատկերներ։

Գնդապետս, որ նախընթաց օրը հիացել էր Ֆինլանդիայով, այդ օրը մնացել էր բառի բուն նշանակութեամբ բերանը բաց և բառ չէր գտնում իր զարմանքը, հիացումը յայտնելու համար։

— Ախր սա ինչպէս է,—ասում էր նա,—որ ես երկար տարիներ գիմնազիայում աշխարհագրութեան ուսուցիչ եմ եղել, սակայն ոչ մի դասագրքի մէջ չեմ կարդացել, որ Սոմկհօլմը շիսէր ունի և այն էլ այսքան գեղեցիկ։ Ինչով են զբաղված մեր դասագրքի հեղինակողները. մի՞թէ կարելի է այսքան մեծ և այսքան սքանչելի մի շիսէր մոռացութեան տալ։

Եւ երբ տեսարանները փոխվում էին և նոր պանօրամներ էին բացվում մեր առաջ, ընկերս նորից ամ էր քաշում, նորից ցոյց տալիս ինձ, թէ որքան ներդաշնակ կնոջով միմեանց են խառնվում ծառերի կանաչ և տների զանազան գոյները, թէ ինչ հրաշալի բուսականութիւն կայ այդտեղ, թէ

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Թիֆլիսի զով եղանակների պատճառով արդէն կամաց-կամաց ամարանոց գնացողները վերադառնում են քաղաք։

✦ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ հաղորդագրութիւն ստացվեց Կիէվի համալսարանից, որ նոր ուսանողներ ընդունելու ժամանակ երևացել է, որ ատտէստատներից երկուսը կեղծ են։ Որպէս հաղորդում են «Нов. Русь» լրագրին, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը, ի նկատի ունենալով որ ատտէստատներ կեղծելու դէպքերը յաճախ են պատահում, ժամադրութիւն ունի ժամանակաւոր առանձին էկսպէրտային յանձնաժողովներ նշանակել համալսարաններին և բարձր դպրոցներին կից, որոնց պարտաւորութիւնն է լինելու ստուգել դօկումէնտները հարցումներ ուղղելով գիմնազիաներին և այլ միջնակարգ դպրոցներին։

✦ Թիֆլիսում լուրեր են տարածված, թէ իբր Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի Պետերբուրգից Կովկաս վերադառնալուց յետոյ՝ պատերազմական դրութիւնը Թիֆլիսում վերացվելու է։

✦ Այսօր, ցերեկվայ ժամը 12-ին, տեղի կունենայ Զուբալովի անուան երեխաների հիւանդանոցի հիմնադրութեան հանդէսը։ Հանդիսին քաղաքային վարչութեան կողմից հրաւիրված են տեղական հիւանդանոցների բոլոր բժիշկները։

✦ Օգոստոսի 6-ին Մետեխի բանտում թոքերի բորբոքումից մեռաւ 2-րդ Պետական Դումայի անդամ Սեվերիան Մ. Զուդէլին։ Հանգուցեալի թաղումը ժողովրդութիւն կայ կատարել վաղը։

✦ Օգոստոսի 6-ին Թիֆլիսի քաղաքային վարչութեան շինութեան մէջ տեղի ունեցաւ զէմստվային խորհրդակցութիւն իշխան Դ. Մ. Թումանովի նախագահութեամբ։ Քննութեան խնդիրը առաջինը եղաւ ջրաբաշխական հարցը։ Ցայտնի է, որ ջրաբաշխական հարցն էլ մասամբ վերաբերում է զէմստվային խնդրին, որովհետև այնտեղ կան զանազան ընտրութիւններ, կանոնների մշակում, որոնց իրաւասու է զէմստվոն։ Մաքերի փոխանակութիւնը չը յանգեց մի որոշման, թէ ինչ չափով պէտք է լինի զէմստվոյի մասնակցութիւնը ջրաբաշխական հարցում։ Այդ առիթով յանձնվեց Ներսէս Աբէլեանին՝ կազմել մի հիմնական զեկուցագիր և ներկայացնել գալիք ժողովին ի քննութիւն։ Երկրորդ խնդիրը քաղաքների մասնակցութեան հարցն էր զէմստվոյի մէջ։ Սրա վերաբերութեամբ մի զեկուցում կարդաց Ալ. Իվ. Խատիսեան, որի առաջադրած խնդիրները մանրամասնաբար քննութեան կենթարկվեն յաջորդ անգամ։

✦ Այսօր Զուբալովեան ժողովրդական տանը հայ թատերասէրների խումբը կը խաղայ «Հարստութեան զոհ» 3 գործողութեամբ դրամա։

✦ «Нов. Русь» լրագիրը հաղուում է մահվան դատավճիռների և պատիժների թիւը անցեալ յուլիս ամսվայ ընթացքում։ Ընդամենը մահվան դատավճիռներ եղել են 87։ Զինուորական-նահանգական դատարանների վճռով մահվան պատժի են ենթարկված 26 հոգի։ Մահվան պատիժների ամենամեծ թիւն ընկնում է Եկատերինօսլավի վրա, ուր մահվան պատժի են ենթարկվել 8 հոգի։ Մահվան դատավճիռներ ամենից շատ եղել են Թիֆլիսում—19, Վարշավայում—12, Կուրսկում—11 հատ։ Ընդամենը ներկայ տարվայ յունվարի 1-ից մահվան պատժի են ենթարկվել 336 մարդ և մահվան են դատապարտված 808 մարդ։ Թուանշանները վերցված են լրագրական աղբիւրներից։ Եթէ ի նկատի առնենք այն հանգամանքը, որ հեռու ծայրագաւառներից տեղեկութիւնները լրիւ չեն ստացվում, մահվան դատապարտվածների թիւը պէտք է որ աւելի շատ լինի։

✦ Ի նկատի ունենալով, որ առաջիկայում մշակվելու է օրէնք գաղթականութեան մասին, առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութիւնը փաստեր հաւաքեց գաղթականական շարժման մասին Ռուսաստանում։ Պարզվեց, որ 1903 թ.-ին Ռուսաստանից գաղթել են 136,093 մարդ, 1904-ին—145,141, 1905-ին—184,897, 1906-ին—215,655, 1907-ին—258,943 և 1908-ին—156,711 մարդ։ Ամենից շատ գաղթում են հրէաները, լեհերը և լիտվացիները։ Ռուսների թիւը գաղթականների միջև շատ անշան է, մօտ 3—4 տոկոս։ Ռուս գաղթականների տոկոսը շատ բարձրացաւ 1907 թ.-ին. նրանց թիւը հասաւ 16,085 մարդու։

✦ Այսօր վրաց աղնւականութեան թատրոնի ամարային այգու շինութեան մէջ տեղի կունենայ Լուչիա Վօլոթի վերջին գաստրոլը։

✦ Վերջերս գիշերով, Պետերբուրգում, Նէվսկայա զաստավայի ետև խուզարկութիւններ կատարվեցին մի քանի բնակարաններում։ Բնակիչներից մէկի մէջ ձերբակալվեց մի բանւոր։ Զորս խուզարկութիւններ կատարվեցին Պետերբուրգեան մասում։ Խուզարկվում էին կովկասցիների բնակարանները, չը նայելով որ խուզարկութիւնների ժամանակ ոչինչ էական բան չը գտնվեց։ Եղած տեղեկութիւնների համեմատ, խուզարկութիւններ և կալանաւորութիւններ են կատարվել և քաղաքի ուրիշ մասերում։

(«Бирж. Вѣд.»)

✦ Բարեգործ մարդկանց ուշադրութիւնն ենք հրաւիրում անել դրութեան վրա մի չքաւոր կնոջ, որը ցանկանում է Թէոդոսիա գնալ, բայց ճանապարհածախս չունի։ Նուէրները կարելի է հացնել՝ ս. Կարապետի վերելք № 15, տ. Խաչատուրովի՝ Մարիամ Մառանջեանին։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Օգոստոսի 6-ին, Դեսիմօնովսկայա հրապարակում, № 7 տանն ապրող Էնգուրազովան իր անզգուշութիւնից վայր ընկաւ երկյարկանի բնակարանից և ծանր ջրդուածքներ ստացաւ գլխից և մէջքից։ Վնասվածը տարված է հիւանդանոց։

✦ Օգոստոսի 6-ին շուշեցի Նիկիտ Խունունցը յայտնեց ոստիկանութեան, որ օգ. 2-ին նրա մօր բնակարանից, Միքայէլեան փող. տ. № 177, կեղծ բանալու օգնութեամբ անյայտ անձեր գողացել են 129 ր. 40 կ. զանազան իրեր։ Կասկածով ձերբակալված է Արսէն Պօցօրիան։

✦ Օգոստ. 5-ին, 1-ին քաղաքամասի ոստիկանութիւնը գնուոր. պահակների հետ միասին շուրջկալի ժամանակ ձերբակալեց 3 անգործ և անցաթուղթ չունեցող մարդկանց։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վլադիվոստոկ, 14 յուլիսի

Այսօր պօստով փոխադրեցի ձեզ 136 ր., հաւաքված տեղիս հայերից՝ Ագանայի սովեալների օգտին։ Նուիրատուները հետեւեալներն են.

Զ. Ցարութիւնեան, Խ. Գրիգորեան, Գ. Ելաղեան և Մ. Սուքիասեան՝ 10-ական ր., Գ. Շարբաթեան, Մ. Լալայեան, Թ. Ստեփանեան, Խ. Իսափեան, Բ. Տէր-Առաքելեան, Կ. Տէր-Թոմասեան և Ց. Քաչուրեան՝

ԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Ֆինլանդիայի գեղեցիկ տեսարանները

Ամենամեծ հաճոյքս ունեցաւ Ֆինլանդիայի գեղեցիկ տեսարանները տեսնելու։ Ինչպէս գիտենք, Ֆինլանդիան ունի զանազան գեղեցիկ տեսարաններ։

5-ական ր., Ց. Առստամեան, Պ. Եսայեան, Մ. Մանուկեան, Ս. Դարմանեան, Կ. Գուրզինեան, Գ. Շահպարոնեան, Ե. Փապաբեան, Ս. Մարգարեան, Ի. Թարխանաշվիլի, Ց. Սարգսեան և Վ. Կախանի՝ 3-ական ր., Ա. Թորոսեան, Ց. Գրիգորեան, Զ. Շահպարոնեան, Ա. Թութիւնջեան, Ե. Մովսիսեան, Ա. Տէր-Սահակեան, Տ. Սողոյեան, Խ. Դաբախեան, Գ. Ուզունեան և Լ. Ցարութիւնեան 2-ական ր., Ս. Ցարութիւնեան, Ա. Տիրացուեան, Յակոբ (վանեցի), Ա. Աւոյեան, Ց. Աշրաֆեան, Թ. Մաչկալեան, Գեւորգ և Մօլա-Յանի Ախունդով՝ 1-ական ր.։ Ընդամենը՝ 136 ռուբլի։

Զ. Ցարութիւնեան

—

Մինսկ, 30 յուլիսի

Մենք, մի խումբ հայ երիտասարդներս, գտնվելով Ռուսաստանի խորքում, Մինսկ քաղաքում, զինուորագրութեան պարտադիր ծառայութեան մէջ 120-դ հետևակ Սերպուխովսկի գնդում, տեղեկանալով «Մշակից» Թիւրքիայում այս տարվայ ապրիլին պայթած փոթորիկների մասին Ադանայի վիլայէթում մեր խեղճ հայ եղբայրների գլխին, յայտնում ենք մեր սրտի խորին կսկիծը ու ցաւակցութիւնը՝ կարդալով անէծք դաւեր սարքող ուրանմեղ արիւններ թափողներին։

Մենք, վերոյիշեալ մի խումբ հայ զինուորներս, հաւաքելով մեր ուղ միջոցներից 8 ր. 26 կ. ուղարկում ենք խմբագրութեանդ, խնդրելով յատկացնել Ադանայի վիլայէթի որբացած հայ եղբայրների օգտին ու «Մշակի» ժողովայ համարներից մէջում տպել ստացված գումարի մասին՝ ի գիտութիւն նուիրատու զինուորների։

Ի դիմաց հայ զինուորների՝

Աւ. Ստեփանեան

—

Ղուբայի հայոց եկ.-ծխ. երկդասեան երկսեռ դպրոցի վարչութիւնը սրանով իր խորին շնորհակալութիւն է յայտնում բազաւբնակ՝ Արալօ-Կասպիական նաւթ. ընկ. հիմնադիր անդամ Խուրշուդ Ամիրջանեանցին, որն ահա երկրորդ տարին է մի-մի հարիւրական ր. նպաստ է տալիս իր խնամոց յանձնված չքաւոր դպրոցին։ Ներկայումս դպրոցը մեծ կարիք ունի այդպիսի բարեբարների, և վարչութիւնը յոյս ունի, որ մեր ազգի մեծարոյ բարերարները՝ ի նկատի ունենալով Ղուբայի գաղթական, սակաւաթիւ ու չքաւոր ժողովրդի և նրա դպրոցի աննախանձելի դրութիւնը՝ պիտի բարեհաճեն հետևել Ամիրջանեանցի բարի օրինակին։

Ի դիմաց վարչութեան՝

Աւ.-ուսուցիչ դպրոցի՝

Խաչ. քահ. Փանոսեանց

ԳԱՅԻԱՆԵԱՆ ԴՊՐՈՑԸ

—

«Մշակի» մէջ տպել էիք, որ կիրակի, օգոստոսի 2-ին, տեղի ունեցաւ Գայիանեան դպրոցի սեփական շինութեան հիմնարկնութեան արարողութիւնը։ Այս առիթով հոգաբարձութեան անունից հարկաւոր եմ համարում տեղեկացնել հասարակութեան հետևեալը։

Գայիանեան ուսումնարանը իր վերաբացման օրից գտեղված է եղել մասնաւոր տան մէջ, Թիֆլիսի Սօլոլակի թաղում, ծխական եկեղեցուց շատ հեռու։ Տների թանգութեան և դպրոցին յարմար շինութիւնների սակաւութեան պատճառով հին հոգաբարձութիւնը ստիպված է եղել տնավարձ տալ տարեկան երկու հազար ռուբլի։ Ուսումնարանի նոր հոգաբարձութիւնը անհընարին համարելով գործը այդպէս շարունակել և իր բիւջէի մի-երրորդականը ծախսել որպէս բնակարանի վարձ և նկատելով, որ դպրոցը այդպիսով փակման վտանգի մէջ է, որոշեց, ինչպէս էլ լինի, վերաշինել դպրոցի հին բնակարանը եկեղեցու դաւթում, որ արդէն բոլորովին քայքայված էր։ Այդ նպատակով հրաւիրվեց ճարտարապետ Օզերով, որ երկիցս մանրազնին քննութեան ենթարկելով հին շէնքը՝ հնարաւոր դտաւ նրա մի մասը հիմնաւորապէս նորոգել, իսկ միւս մասը վերաշինել։ Նորոգութեան և վերաշինութեան համար ճարտարապետը կազմեց մի նախահաշիւ, որով հոգաբարձութիւնը պիտի ծախսէր 12000 ր.։ Հոգաբարձութիւնը առանց տատանման ընդունեց այդ նախահաշիւը և ձեռնամուխ եղաւ շինութեան։

Այժմ հարց է ծագում, թէ հոգաբարձութիւնը որտեղից պիտի վերցնի այդ գումարը։ Մեզ զեկավարող սկզբունքն այդ խնդրում եղել է հետևեալը։ Հայ ժողովուրդը երբէք չէ խնայել իր կամաւոր նուէրները եկեղեցուն և ուսումնարանին. նա այսօր էլ չի խնայի իր նպատակները մանաւանդ Գայիանեան ուսումնարանին, որ ռուսահայոց անգրանիկ օրիորդական դպրոցն է եղած, որ համահայկական նշանակութիւն և դեր է ունեցած, որ այնքան անձնանուէր կին-գործողներ է տուած Թիֆլիսին ու գաւառներին։

Ստացած լինելով ազգիս Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը և վայելելով թեմիս սրբազան առաջնորդի հովանաւորութիւնը, հոգաբարձութիւնս վստահ է, որ հայ հասարակութեան մէջ նա կը գտնի կարող ձեռքեր, որոնք օգնութեան կը գան իրան և կը մատակարարեն այդ ինքն ըստ ինքեան չնչին գումարը։ Եւ երբ մի մարդ չը գտնվի, որ այդ բարենպատակ ձեռնարկութեան պատիւն ամբողջապէս իրան վերապահի, ընդհանրութիւնը, վստահ ենք, իր առատ լուման ուղարկելով հոգաբարձութեան, կը լրացնի այդ գումարը։ Գայիանեան դպրոցը մի եկեղեցական ծխական ուսումնարան չէ. նա գործելու է ամբողջ Կովկասի համար և նրան նպաստել պարտաւոր են բոլոր տեղերի հայերը։ Թող ինտելիգենտ և կարող մարդիկ առաջ անցնեն և օրինակ հանդիսանան՝ ինչքան և ինչով կարող են։

Խնդրում եմ միւս թերթերին արտատպել այս նամակը։

Անդամ հոգաբարձութեան՝

Ն. Տէր-Ղևոնդեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

6 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ժամանեց անգլիական զօրքի հերթապահ գեներալ սըր Համիլտոնը՝ զինուորական մեծ վարժութիւններին ներկայ լինելու համար։

Ընկերութիւնների և միութիւնների ժամանակաւոր կանոնների երրորդ կէտի հիման վրա փակվեց գրականագէտների և ուսումնականների փոխադարձ գանձարկղը։

Գատչինայի զինուորական դաշտում Նորին Մեծութեան ներկայութեամբ տեղի ունեցաւ մի քանի գնդերի եկեղեցական հանդէս, որին ներկայ լինելու եկան նաև այս տարի զինուորական դպրոցներն աւարտած իւնկերները։ Թագաւոր Կայսրն, անցնելով վերջիններիս շարքերով, բարեհաճեց շնորհաւորել նրանց օֆիցէրական աստիճան ստանալու համար և ասաց մօտաւորապէս հետևեալը.

«Այսօր ձեր կեանքի ամենանշանաւոր օրն է։ Յիշեցեք Մօսկվայի պատգամը՝ հաւատացէք Աստուծուն, նաև ձեր հայրենիքի հզօրութեանը և մեծութեանը։ Նուիրված եղէք ձեր թագաւորներին, հնազանդվեցեք ձեր իշխանաւորներին, եղէք անկեղծ ընկերներ միմեանց հետ։ Յիշեցէք, որ ամեն կարգի գնդերը կազմում են ռուսական մի հզօր զօրաբանակ, մի ընտանիք։ Եղէք խիստ, սակայն արդարադատ դէպի ձեր ստորադրեալ զինուորները։ Եռանդալի եղէք ձեր ծառայութեան մէջ, և այն ժամանակ ծառայութիւնը ձեզ կը թւայ թեթև և բաղդաւոր։ Սրտանց ձեզ աջողութիւն եմ ցանկանում ձեր նոր ասպարէզում»։

Ռուս ժողովրդի միութեան ռազմիկ խմբի նախկին պետ Իւսկէվիչ-Կրասովսկին յանձնված է ֆինլանդական իշխանութիւնների ձեռքը և ուղարկված է Վիբորգի բանտը։

ՕԴԵՍՍԱ։ Տեղական թերթերի և լրագրական գրաշարների ներկայացուցիչների ժողովում կիրակնօրեայ հանդստեան հարցի վերաբերութեամբ որոշվեց գումարել հոկտեմբերի 1-ին հարաւ-ռուսական լրագիրների ներկայացուցիչների համաժողով և մինչև այդ ժամանակ չը հրատարակել լրագիրները երկուշաբթի օրերը։ Ընտրվեց մի բիւրո նախապատրաստական աշխատանքների համար։

Խօլերայով հիւանդացան 27, մեռան 10 հոգի։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ։ Պետերբուրգում միսսիայի քարտուղար Սկավենիուսը նշանակվեց դանիական դեսպան Ռուսաց Կայսերական Տան կից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ

Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Գուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Յ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—11—ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Ն. Վ. ԱԼԲԵԽՏ—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՑԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 ժ. ներքինհ. և երեխայոց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՑԱ-ԷՆԳԵԼ—6— հ. ժ., մանկաբարձ., կանանց և երեխայոց։

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Հատախօսիրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Ամարային երթևեկութիւն

(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից մեկնում է

ԲԱԳՈՒ՝ ՊՕՍՏԱՏԱՐ գնացքը 11 ժ. 38 ր. երեկ., Գանձակ է հասնում 6 ժ. 1 ր. առ., Ելիսաւ՝ 7 ժ. 58 ր. առ., Հաջի-Կաբուլ 1 ժ. 12 ր. ցերեկ. Բալաջարի 4 ժ. 43 ր., Բաքու՝ 6 ժ. 7 ր. երեկ.։ ՄԱՐԴԱՍԱՐ ԳՆԱՑՔ № 6՝ 7 ժ. 36 ր. առ., Գանձակ է հասնում 1 ժ. 41 ր. ցերեկ., Ելիսաւ՝ 3 ժ. 36 ր. ցերեկ., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 15 ր երեկ., Բալաջարի՝ 11 ժ. 37 ր. գիշ., Բաքու՝ 12 ժ. 44 ր. գիշ.։ ՄԱՐԴԱՍԱՐ ԳՆԱՑՔ № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ՝ 4 ժ. 13 ր. առ., Ելիսաւ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. Բալաջարի՝ 1 ժ. 44 ր. ցերեկ., Բաքու՝ 2 ժ. 18 ցերեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ ՊՕՍՏԱՏԱՐ 1 ժ. 44 ր. գիշեր., Ալէքսանդրոպոլ է հասնում 12 ժ. 35 ցերեկ., Ուլուխանլու՝ 6 ժ. 11 ր. առ., Զուլֆա՝ 1 ժ. 10 ր. գիշեր.։ ՄԱՐԴԱՍԱՐ ԱՊՐԱՆՔ. 5 ժ. երեկ., Ալէքսանդրոպոլ է հասնում 3 ժ. 38 ր. առաւ., Ուլուխանլու՝ 9 ժ. 12 ր. առաւ., Երևան՝ 10 ժ. 7 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ՝ ԱՐԱԳ. ԳՆԱՑՔ 8 ժ. 31 ր. երեկ., Բաթում է հասնում 7 ժ. 14 ր. առ.։ ՊՕՍՏԱՏԱՐ՝ 9 ժ. 4 ր. երեկ., Բաթում է հասնում 10 ժ. 33 ր. առ.։ ՄԱՐԴԱՍԱՐ՝ 1 ժ. 1 ր. գիշ., Բաթում է հաս. 2 ժ. 34 ր. ցերեկ.։

Թիֆլիս է հասնում

ԲԱԳՈՒԻՑ՝ ՊՕՍՏԱՏ. ԳՆԱՑՔԸ 8 ժ. 6 ր. առաւ. ՄԱՐԴԱՍԱՐ № 5՝ 12 ժ. 11 ր. գիշ., ՄԱՐԴԱՍԱՐ. № 11՝ 10 ժ. 45 ր. առ.։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ ԱՐԱԳ. 9 ժ. 36 ր. առ., ՊՕՍՏ. 10 ժ. 38 ր. երեկ., ՄԱՐԴԱՍԱՐ՝ 8 ժ. 42 ր. առ.։

ՋՈՒԼՖԱՅԻՑ-ԵՐԵՒԱՆ՝ ՊՕՍՏ. 6 ժ. 26 ր. երեկ. ՄԱՐԴԱՍԱՐ-ԱՊՐԱՆՔ. 6 ժ. 27 ր. ցերեկ.։

Բ Ժ Ի Շ Կ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։

Հիւանդների ընդունելութիւնը { *12—1 առաւօտեան*, *5—6 երեկոյեան* }

Միքայէլեան փող., № 36, տ. Ճավճաւաձէի։

100—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Միայն

Հասակաւոր տղամարդկանց Համար

Տղամարդկանց հագուստի համար կտորեղէնների շրջանում եղած նորութիւնը «Շէվիօտ կօլումբ» կտորն է։ Այնպիսի մի էժան գնով՝ այն է 5 ր. 25 կ., լաւ տեսակինը 6 ր. 25 կ., տղամարդկանց ամբողջ կոստիւմի համար, 4¼ արշին, կտորը ոչնչով չէ զանազանվում արշինը 5—6 ր. արժեցող նոյնատեսակ կտորից և ունի նրա բոլոր յատկութիւնները, այն է՝ դերազանց ամրութիւն, գործնականութիւն և շքեղութիւն։ Գոյները՝ սև, մուգ կապոյտ, շագանակագոյն, ոլորվ-ձիթագոյն կամ թէ նոյն գոյները բծերով։ Ուղարկվում է պօստով, վերադիր վճարով և առանց կանխավճարի։ Երեք կամ աւելի կտոր պատուիրելուց՝ իւրաքանչիւր կտորին ձրիաբար կցվում է հարկաւոր քանակութեան աստառացու։ Առանց րիսկի, լրիւ երաշխաւորութիւն, եթէ կտորը չը հաւանվի՝ յետ է վերցվում։ Պահանջները խնդրում եմ հասցէագրել՝

Въ фабрику шерстяныхъ издѣлій

Зигмунта Розенталя г. Лодзь № 15. О.

(В.29639) 385. 1—1

Լոյս տեսաւ

„ԴԱՍԸՆԿԵՐ“

Առաջին տարվայ

Այբբենարան-ընթերցարան

Բոլորովին նոր ուղղութեամբ կազմած Զարդարված բազմաթիւ գունաւոր պատկերներով Դասագրքին կից կայ համառօտ բացատրութիւն գործադրողներին։

Կազմեցին

ԱՐՇ. ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆ և Տ. ՌԱՇՄԱՃԵԱՆ

Աշխատակցութեամբ Աւ. Իսահակեանի

Ծանօթանալ ցանկացող դաստատները կարող են ձրիաբար ստանալ «Գուտտենբերգ» գրախանութից։ Օտար տեղերից դիմողները պիտի ուղարկեն միմիայն ճանապարհածախքը 10 կ. պօստի մարկայով։

Կ Ա Զ Մ Ա Ծ

Գինն է 50 կ.

Գումարով առնողներին 20 տոկոս զեղչ։ Ցանկացողները դիմեն Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրախանութին։

(օ. մ. շ. .կ) 10—1

!Լիժան անկարելի է!

2 ռուբ. 75 կոպէկով.

ուղարկում եմ «Տրիումֆ» շէվիօտը, 4¼ արշ. տղամարդկանց հագուստի համար։ Զը նայած չափազանց էժանութեան՝ «Տրիումֆ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր յատկութիւնները ամենալաւ կտորների—միանգամայն ամուր, ձեռնտու և շքեղ է։ Գոյները՝ սև, կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Ճանապարհածախքը 55 կ.։ Երեք և աւելի կտոր թերել տալուց ճանապարհածախքը իմ հաշվին։ Պահանջները հասցէագրել՝

Въ Фабрику Т-ва «ЭХО», г. Лодзь, № 15.

Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով։

(շ. ե.) (В.44609) 706. 10—3

Լոյս տեսաւ

Յովհ. Կոստանեան

„ՆՈՐ ԻՍՐԱՅԵԼԻ ՍԱՂՄՈՍՆԵՐ“

(Տաճկական սարսափներ)

Դիմել՝ «Գուտտենբերգ», կենտրօնական և գաւառական գրավաճառներին։

(օ. մ.) 722. 6—4

Առաջիկայ ուսումնական տարվայ սկզբից

Թաւրիզում կը բացվի ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ Կենտրօնական դպրոց

երրորդ և չորրորդ դասարաններով (երկսեռի համար), մօտաւորապէս Գէորգեան Ճեմարանի և թեմական դպրոցների ծրագրով։

Հրաւիրվում են համալսարանաւարտ ՏԵՍՈՒՉ, ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ բարձրագոյն կրթութեամբ և ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ միջնակարգ կրթութիւն ստացած։

Պայմանների մասին դիմել՝ Манглисъ, *Զիբրայիլ Բուդաղեանց,* Воронцовская ул. дача Гульвердова.

(ե. հ. շ.) 752. 6—2

ՀԱՅԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Նրանց, որոնք ցանկանում են ծանօթանալ իտալական կրնակի հաշւապահութեան և առևտրական գիտութիւնների դասընթացքներին Ժողովրդական իմ մեթոդի հետ, ուղարկում եմ ծրագիրը և փորձնական դասախօսութիւնը ձրի։

Я. Ю. МАКЪ, гор. Либава.

(օգ.8,18) (П.101888) 637. 5—3

Տպագրվում է

և պատրաստ կը լինի մինչև օգոստոսի 15-ը

Իրազնական դասերը

Դաստիարակում եմ բաժանորդագրութիւնը։

Գրքի գինը 1 ռուբլի. հատով պատուիրողը ճանապարհածախք չէ վճարում։

Գումարով գնողն իր ճանապարհածախսով ստանում է զիջումով։

10 օրինակի համար		*20%*
20	» »	*25* »
30	» »	*30* »

Առանց կանխավճարի պատուէրներ կարող են տալ միայն իմ նախկին աշակերտները։

Սեդրակ Մանդինեան

Тифлисъ, Могнинская, 4.

(օ. մ.) 746. 4—3

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

БАКУ, уголъ Красноводск. и Меркурьевск., телеф. № 10—56.

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական և առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշվապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Կուրսերում ուսանվում են՝ 1) Առևտրական թւաբանութիւն և թւաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշվապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագիր ձեռագիր). 7) Ռուսերէն գրող մեքենայի վրա։ Ցանկացողների համար՝ առանձին վճարով լեզուներ և ստենոգրաֆիա։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան 4—7-ը։

*Կուրսերի կանոնագրութիւնը (*уставъ*) և մանրամասն ծրագիրը (*программа*) տրվում և ուղարկվում են ԶՐԻԱԲԱՐ։ Օտարաքաղաքացիները դիմում են՝* Баку, учредителью коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (ե. շ.) 731. 20—2

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ

ԿՕՇԿԵՂԷՆ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.

Ամեն տեսակի մոդային ձևերի. գտնվում է բոլոր յայտնի խանութներում։

ФАБРИЧНОЕ КЛЕЙМО

Իսկականը միայն այս դրոշմով

С.ПЕТЕРБУРГЪ.

ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՐԷԶԻՆ. ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ТРЕУГОЛЬНИКЪ“

ԵՆՈՒՆՈՎ

Թիֆլիսի բաժանմունքը գտնվում է **ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ**

ԱՅԴՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ **ԿԱԶՈՒԻԶԷՆԻ** *Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան*

ԿՐԿՆԱԿՕԶԻԿՆԵՐԻ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՐԷԶԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Կրեմ եւ Ապրետուրա կօշկեղէնի համար

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ.

(շ.) 182. 0—24

Электропечатня Н. Г. Аганьянцъ Полицейская 7.